ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Ար.մեդտեխնիկա ՍՊԸ-ն ԷԱՃԱՊՁԲ-2026/16-11-ԵՊԲՀ ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	ապրանքային նշանը	մակնիշը	տեխնիկական բնութագիրը
1	Tellyes	Guardian Baby, TYE9042	Սիրտ-թոքային վերակենդանացման (ՍԹՎ) ուսուցման երեխայի մանեկեն, ներառյալ ծրագրային ապահովում Այս մոդելը երեք ամսական նորածնի մանեկեն է, որը պետք է նախատեսված լինի սիրտ-թոքային վերակենդանացման (ՍԹՎ) հիմնական ուսուցման , գնահատման և ամփոփման համար, կատարվող գործողությունների տվյալները կարող են ցուցադրվել իրական ժամանակում: Առնվազն հետևյալ հմտությունների ուսուցում՝ · Ծանոթություն անատոմիային · Օգնում է հեշտությամբ հասկանալ ՍԹՎ նպատակը և սկզբունքները, և բարելավել կրթական ուսուցումը՝ իրական ժամանակի հետադարձ կապի շնորհիվ · Սրունքի (տիբիալ) պունկցիա Հատկանիշներ · Մանեկեն՝ 1) Իրատեսական երեխա՝ ճիշտ անատոմիական կառուցվածքներով և շոշափելի ոսկրային նշագծերով, ներառյալ կրծոսկրի կոթը (manubrium sterni), թրաձև ելունը (xiphoid process) և այլն: 2) Շարժուն պարանոց և վերջույթներ՝ փափուկ և իրատեսական զգացողությամբ 3) Շնչուղիները հնարավոր է բացել կատարելով գլխի թեքում- կզակի բարձրացում և ծնոտի հրում: Պետք է

			հնարավոր լինի որոշել շնչուղիները բաց են թե ոչ: 4) Օդափոխությունը կարող է իրականացվել բերանից բերան և պարկ-փական-դիմակով (ամբու պարկի միջոցով): Շնչառական ծավալը կարող է հայտնաբերվել և գնահատվել ավտոմատ կերպով: 5) Սեղմման դիրքը որոշվում է պտուկի գծով: 6) Մեկ անձի և երկու անձի Սրտանոթային վերակենդանացման իրականացում և՛ 30:2, և՛ 15:2 սեղմման օդափոխության հարաբերակցությամբ: 7) Սրտանոթային վերակենդանացման ժամանակ սեղմման տվյալները կարող են ցուցադրվել իրական ժամանակում: Կարող են հայտնաբերվել սեղմման խորությունը, սեղմումների քանակը և սեղմման դիրքը: Մանեկենը կարող է դիմակայել կրծքավանդակի ոչ պակաս, քան 80,000 անգամ սեղմման: 8) Պետք է հնարավոր լինի կատարվել Հեյմլիխի մանևրը: Պետք է հնարավոր լինի հայտնաբերել մեջքի հարվածներ և որովայնի հրումները, և գործողությունների ցիկլերը պետք է ավտոմատ կերպով գրանցվեն: 9) Արհեստական բրախեալ զարկերակի պուլս: 10) Տիբիալ պունկցիայի համար կարող են օգտագործվել իրական պունկցիոն ասեղներ, որոնց միջոցով հեղուկը կարող է դուրս բերվել կամ ներարկվել մուտքի երկայնքով: Ծակման տեղը դիմացկուն է և փոխարինելի: 11) Ներկառուցված լիթիումային մարտկոց՝ ոչ պակաս, քան 3 ժամ անընդմեջ աշխատանքի տևողությամբ: 12) Անլար դիզայն: Ծրագրային ապահովում՝ 1) QR կոդի առկայություն, որը թույլ է տալիս օգտատերերին արագ մուտք գործել կառավարման համակարգ, առանց տեղադրման անհրաժեշտության: Պետք է հնարավոր լինի սկանավորել և օգտագործել ցանկացած սարքով, ինչպիսիք են բջջային հեռախոսը, պլանշետը, համակարգիչը և այլն, պետք է համատեղելի լինի Windows-ի, Android-ի և այլ հիմնական օպերացիոն համակարգերի հետ: 2) Երկու ռեժիմի առկայություն՝ հրահանգչի ռեժիմ և ուսուցանողի ռեժիմ: Սիրտ-թոքային վերակենդանացման ուսուցում՝ իրական ժամանակում գործողությունների տվյալների ցուցադրմամբ և օբյեկտիվ գնահատմամբ: Թրեյնինգի տևողությունը կարող է հարմարեցվել: 3) Պետք է համապատասխանի AHA 2020 թվականի ուղեցույցներին: 4)

			Մարզման ընթացքում գործողության տվյալները, ինչպիսիք են սեղմման խորությունը, հաճախականությունը, դիրքը, շնչուղիների բացումը, պետք է ցուցադրվեն իրական ժամանակում: Օգտատերերը կարող են դիտել մանրամասները, ինչը կօգնի շտկել սխալ գործողությունը : 5) Բոլոր թրեյնինգների և գնահատման տվյալները կարող են ավտոմատ կերպով պահպանվել: Օգտատերերը կարող են դիտել որոշակի ուսուցման մանրամասները, ներառյալ ուսուցման ընդհանուր միավորները, ուսուցման(մարզման) ընդհանուր տևողությունը, ցիկլերի քանակը, սեղմումը, օդափոխությունը, շնչուղիների բացումը և այլն: 6) Հնարավոր է տվյալների վերարտադրում վերանայման, գնահատման և ամփոփման համար: 7) Հնարավոր է պահպանել և արտահանել արդյունքները: 8) Հնարավոր է ավտոմատ կերպով կարգավորել ժամանակը, որպեսզի արդյունքների ցանկում նշված ժամանակը համընկնի սարքի ժամանակի հետ: Քաշը ոչ ավել, քան 4,5 կգ Համալիր՝ Մանեկեն – 1 հատ Սրունքի պունկցիայի ոտք – 1 հատ Սեղմման զսպանակ – 1 հատ Թոքային պարկ – 5 հատ Էլեկտրաէներգիայի ադապտեր – 1 հատ Երաշխիքային ժամկետը՝ մատակարարման պահից սկսած առնվազն 12 ամիս: Ապրանքը նոր է և չօգտագործված:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Ар.Медтехника ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԷԱՃԱՊՁԲ-2026/16-11-ԵՊԲՀ ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	товарный знак	марка	технические характеристики
1			